

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒԻ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ  
ԿԱՐԴԱՏՈՒԱԾ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ  
27.1.1974

Սիրելի Քոյրեր եւ Եղբայրներ,

Նախ եւ առաջ շնորհակալութիւն թուր ներկաներուդ որ այսօր կրկին ձեր հանգիստի պահերը զոհեցիք եւ սիրով ներկայ եղաք մեր տարեկան անդամական ժողովին:

Յարգելի ներկաներ,

1973 տարին եղաւ յաջողութեան եւ յառաջդիմութեան շրջան մը Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյս համար: Միացեալ Նահանգներու մէջ իմ տասնամեայ ծառայութենէս յետոյ երբեք յուսախաբ չեղայ, Մոնթրէալի այս պատուական ծուխին մէջ: Հոս եւս գտայ հոգատար եւ Քրիստոսասէր ու առաքինասէր ժողովուրդ մը որ աւելի տեղեակ մեր պապենական սովորութիւնն ինններուն, տեսայ անոնց մէջ յարգանքով մօտենալու եւ կատարելու իրենց վստահուած պարտականութիւնները Տիրոջը Տան փառաւորման համար:

Պաշտօնավարութեանս երկրորդ տարին լրացաւ, շատ սիրով եւ համբերութեամբ տարինք մեր վրայ դրուած խաչը: Միշտ ի հարկէ նը կատի ունենալով մեր հայոց եկեղեցիին վեհութիւնը եւ անոր հաւատաւոր ու անզուգական ժողովուրդը: Այս տարեկան ժողովի առիթով կուզեմ խորապէս շնորհակալութիւն յայտնել սիրելի ժողովուրդիս, կրտսէրէն մինչեւ երիցազոյնին, որոնք բացառիկ խնամք եւ զուրգուրանք ցոյց տուին, անձիս հանդէպ, այս անցնող շրջաններուն: Կը մաղթեմ եւ կաղօթեմ որ անսասան մտայ հայոց Եկեղեցին, եւ անոր պաշտպան հայ ժողովուրդը:

Դարձեալ կուզամ շնորհակալութիւններս յայտնել այս շրջանին եկեղեցւոյս սրտանց եւ նուիրուով գործակցող Պատուարժան Եփեսոսեան Խորհուրդի անդամոց, Դպրաց Դաս Կոմիտաս Երզնթիւմբի վարչու - թեան եւ անդամոց, եկեղեցասէր ժրջան Տիկնանց Միութեան, Հայ Բարեգործական Ընդհ. Միութեան, Մամիկոնեան Մշակութային Յանձ. Ին, Շաքաթօրեայ Դպրոցի Տնօրէնութեան եւ Ուսուցչաց կազմին, Բուրաստան ամսաթերթի պատուարժան վարիչներուն, որոնց թուրն ալ աշխատեցան խոնարհութեամբ եւ յարգանքով, ժողովուրդին թուր խաւերուն հետ, ի շահ եւ պայծառութիւն Ս. Գր. Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ: Կօրնենք Ձեր թուր տարած ջանքերը եկեղեցիէն ներս կամ դուրս, Աստուած վարձատրոց ըլլայ:

Սիրելի անդամներ,

1973 տարին չեղաւ մեզի համար նստելու տարի մը, ժողովուրդը վազբի եւ գործունէութեան մէջ պահեց եւ մենք հոգեպէս ուրախացանք երբ կատարեցինք երիտասարդ հայ գրագրու նշանախօսութիւններն ու հարսանիքները: Անցնող տարուան ընթացքին, Եկեղեցւոյց մէջ կատարեցինք 44 մկրտութիւն, 25 պսակադրութիւն եւ 21 յուղարկաւորութիւններ: Այցելեցինք հիւանդանոցներ եւ ծուխիս անդամներու տուններ զանոնք հոգեպէս մխիթարելով: Անխաբան կատարեցինք պաշտամունքները, սակայն պէտք է յիշել թէ, առայժմ լոճճ են մեր երանաշնորհ հայրապետներու թաղները եկեղեցիէն ներս եւ կը զոհանանք միայն Սուրբ Պատարագներով:

Փոքրիկ ձայնաւորներու խումբը որ կը հաշուէ 40 երկսեռ փոքրիկներ կը շարունակեն եւ պիտի շարունակեն իրենց գործունէութիւնները: Հետզհետէ եւ տարուէ տարի, անոնք պիտի դառնան սիւնը եւ պահպանողները եկեղեցիին:

Դարձեալ տարուան ընթացքին ներկայ գտնուեցանք Եփեսոսեան Խորհուրդի ժողովներուն եւ կամ եկեղեցւոյս կողմէ տրուած ձեռնարկ

ներուն: Համեստ կարողութեամբ եւ կամ լռելեայն այն պարտակա-  
նութիւնները զոր կատարեցինք եւ կամ կը կատարենք, անմիջական  
օգնական ունեցած ենք Եկեղեցւոյս դիւանապետ Պրն. Վահէ Թէթլին  
որուն ունեցած հմտութենէն օգտուելով շուտով մանչցանք անձերն  
ու համայնքը: Եկեղեցւոյս գրասենեակի աշխատանքները անչափելի  
են: Գնահատանքի արժանի է դիւանապետը իր տարած ջանքերուն հա-  
մար:

Կրկին շնորհակալութիւն բոլոր նուիրատուներուն, աշխատող-  
ներուն, Աստուած առատօրէն իր բարիքները պարգեւէ անոնց: Բարի  
եւ առողջ օրեր բոլորիդ եւ խաղաղութիւն համայն աշխարհի:

ՄԱՄԻԿՈՆ ԲԶՆՑ. ՈՍԿԱՆՆԱՆ

Հովիւ եւ Նպիազահ

